

## Կիպրահայ

### Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԱՂԱ ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ԱՂԱ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԳՈՆԵԱՆՆԵՐՈՒ

Տարեկան սրբազան աւանդութեամբ, Ս. Յովհաննու Կարապետի Տօնին՝ Կիպրակի Յունուար 13, 2013-ի առաւօտեան, Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ,



յետ-Պատարագի, Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ՝ Մելգոնեան անմահ բարերարներ՝ աղա Կարապետ եւ աղա Գրիգոր Մելգոնեաններու հոգւոց համար ի ներկայութեան Պետական Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի, Թեմական եւ Վարչական ժողովներու Ատենապետներուն, Նարեկ վարժարաններու Հոգաբարձութեան Ատենապետին եւ երեց ու կրտսեր մելգոնեանցիներու:

Այնուհետեւ, ներկաները համախմբուեցան Մելգոնեան բարերարներու դամբանին առջեւ՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջափակին վրայ, ուր,



գլխաւորութեամբ Տէր Մոմիկ քահանայ Հապէշեանի, Պաշտամունքի արարողութիւն կատարուեցաւ ի Յիշատակ անմահ Բարերարներու հոգւոց: Այնուհետեւ, ներկաները միասնաբար երգեցին՝ «Ի Վերին Երուսաղէմ»ը, Տէրունական աղօթքը եւ հուսկ՝ աւանդական

դարձած Մելգոնեանի քայլերգը, «Անմահ Լուսոյ»ն, խոր յուզումով եւ ապրումով:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

## Կիպրոսի Հանրապետութեան Նախագահը՝ Անթիլիասի Մէջ

«Հայ Եւ Յոյն Ժողովուրդները Արդարութիւն Կը Պահանջեն Յեղասպան Թուրքէն»  
Նշեց Արամ Ա. Կաթողիկոս «Մենք Պիտի Շարունակենք Հայ Ժողովուրդի Կողքին Պայքարիլ Ի Խնդիր Արդարութեան» Ընդգծեց Տիմիթրիս Խրիսթոֆիաս



Հինգշաբթի, 10 Յունուար 2013-ի երեկոյեան, Անթիլիասի մայրավանք այցելեց Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Տիմիթրիս Խրիսթոֆիաս: Նախագահին կ'ընկերանար նախարարներէ ու երեսփոխաններէ բաղկացած 18 հոգինոց պատուիրակութիւն մը:

Նախ եւ առաջ նախագահը եւ Արամ Ա. կաթողիկոս առանձին հանդիպում մը ունեցան, որուն ընթացքին արծարծուեցան Լիբանանի ու Կիպրոսի, ինչպէս նաեւ Հայաստանի ու

Կիպրոսի յարաբերութեանց եւ կիպրահայ համայնքին եւ ազգային պահանջատիրութեան առնչուած հարցեր:

Ապա վեհարանի դահլիճին մէջ վեհափառ հայրապետն ու նախագահը իրենց ողջոյնի խօսքերը արտասանեցին: Իր խօսքին մէջ, վեհափառ հայրապետը անդրադարձաւ Կիլիկեան շրջանէն սկսեալ հայ եւ կիպրացի ժողովուրդներուն միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութեան՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կրօնական եւ այլ մարզերուն մէջ: Վեհափառը յայտնեց, որ Կիպրոսը մնայուն ներկայութիւն եղած է հայ ժողովուրդի կեանքին ու պատմութեան մէջ: Ապա ան անդրադարձաւ այն իրողութեան, թէ երկու ժողովուրդները եղած են ճակատագրակից՝ ենթարկուելով նոյն ցեղասպան թուրքին հալածանքներուն, բռնագրաւման ու ջարդին: Հետեւաբար, «այսօր մեր երկու ժողովուրդները պահանջատէր են. մեր դատը արդարութեան դատ է: Երբ թուրքը կ'ուրանայ իր գործած ցեղասպանութիւնը, երբ թուրքը կը շարունակէ բռնագրաւումի տակ պահել Կիպրոսի կէտը, միջազգային համայնքը պէտք չէ անտարբեր մնայ՝ միջազգային օրէնքը անտեսող Թուրքիոյ այս քայլերուն նկատմամբ», ըսաւ վեհափառը: Խօսելով կիպրահայ համայնքի մասին՝ վեհափառը իր խոր գոհունակութիւնը յայտնեց պետութեան ցուցաբերած հոգածութեան գծով: Այս ծիրին մէջ վեհափառ հայրապետը նաեւ անդրադարձաւ Թուրքիոյ կողմէ գրաւուած շրջաններուն մէջ գտնուող Սուրբ Մակարայ վանքին, առաջնորդարանին, եկեղեցւոյ, դպրոցին ու ազգապատկան կալուածներուն, եւ յիշեցուց նախագահ Խրիսթոֆիասին, որ պէտք է բարւոք լուծում մը գտնուի՝ միջազգային օրէնքի լոյսին տակ, բռնագրաւուած կալուածներու հարցին:

Վեհափառ հայրապետը կը պարգևատրէ Խրիսթոֆիասը: Ապա վեհափառ հայրապետը Կիլիկեան «Իշխան»-ի կարգի շքանշանով պարգևատրեց Կիպրոսի Հանրապետութեան նախագահը:

Խօսք առնելով նախագահ Խրիսթոֆիաս անդրադարձաւ հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան. ան ըսաւ՝



«ամբողջութեամբ կը բաժնեմ վեհափառ հայրապետին արտասանած խօսքը, երբ ան յատուկ կերպով անդրադարձաւ հայ եւ յոյն ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան ու նաեւ երկու ժողովուրդներու միացեալ պայքարին ի խնդիր արդարութեան»: Նախագահը լայնօրէն խօսեցաւ Թուրքիոյ կողմէ Կիպրոսի կղզիին գրաւման մասին՝ նշելով. «Կիպրոսի գրաւումը կը

շարունակուի Թուրքիոյ կողմէ: Թուրքիան նոյնիսկ արգելք կը հանդիսանայ կիպրացի թուրքերու հետ մեր երկխօսութեան: Թուրքիան վտանգաւոր ծրագիրներ ունի ոչ միայն Կիպրոսի, այլեւ ամբողջ շրջանին նկատմամբ», ըսաւ Կիպրոսի նախագահը: Ապա աւելցուց. «Հայ եւ յոյն ժողովուրդները զինակից են արդարութեան համար տարուող պայքարին մէջ»: Ապա նախագահը իր բարձր գնահատանքը յայտնեց Կիպրոսի հայութեան գծով՝ շեշտելով, որ գրաւեալ շրջաններուն մէջ գտնուող ազգապատկան կալուածներու հարցը Կիպրոսի կառավարութիւնը պիտի շարունակէ հետապնդել:

Հանդիպման աւարտին, վեհափառ հայրապետն ու նախագահը ուղղուեցան Անթիլիասի մայրավանքի Նահատակաց յուշարձան-մատուռը, ուր վեհափառ հայրապետը հոգուց արտասանեց մեր մէկուկէս միլիոն նահատակներու հոգիներուն համար եւ լայն բացատրութիւններ տուաւ նախագահ Խրիսթոֆիասին ընդհանրապէս ցեղասպանութեան ու յատկապէս Տէր Զօրէն Անթիլիաս փոխադրուած նահատակներու աճիւններուն մասին:

Նախագահին ընդունելութեան վեհափառ հայրապետին կողքին ներկայ էին կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան անդամները, Լիբանանի առաջնորդը, միաբան հայրեր, երեք հայ քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչները, պետական հայ նախարարներ ու երեսփոխաններ:

Նոյն երեկոյեան, հանրապետութեան նախագահ զօր. Միշել Սլէյման ի պատիւ Կիպրոսի նախագահին ճաշկերոյթ մը սարքեց, որուն ներկայ եղաւ նաեւ վեհափառ հայրապետը: Նոյն գիշերն իսկ, միօրեայ այցելութեան աւարտին, Կիպրոսի նախագահը վերադարձաւ Կիպրոս:

## Խմբագրական

### Հրանդ Տինքի Նահատակութեան Տարելիցը՝ Զգաստութեան Հրաւեր

Ասկէ վեց տարիներ առաջ, ճիշդ այս օրերուն՝ 2007-ի Յունուար 19-ին, փամփուշտի երեք կրակոցներ դիտապաստ կը զգեսնէին Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթի գլխաւոր



խմբագիրը, խիզախ հրապարակագիրն ու մտաւորականը՝ Հրանդ Տինքը, իր իսկ խմբագրատան առջեւ, պետական ահաբեկչութեամբ լռեցնելով՝ ճշմարտութեան, արդարութեան եւ ժողովրդավարութեան համար պայքարող աննկուն քաջամարտիկը, գաղափարապաշտ մտաւորականը, Թուրքիոյ «ամենէն քաջ ու ամենէն ազատ ձայնը»:

Իր նահատակութենէն վեց տարի ետք, տակաւին հայ Պահանջատեր հայութիւնը շատ բան ունի մտորելու, քննարկելու եւ սորվելու Հրանդ Տինքի վարք ու բարքէն, անոր պայքարի գաղափարականէն, դուրս գալով մանաւանդ ա՛լ հնացած կաղապարներէն ու կարծրատիպերէն...:

Քաղաքական առաջին դասը գուցէ՝ հայութեան եւ ի մասնաւորի տարագիր հայութեան խոր գիտակցումը ըլլալու է այն անհերքելի իրողութեան, որ արդի Թուրքիան հաւատարիմ ժառանգորդն է երիտթուրքերու Փանթուրքիզմի քաղաքականութեան, թաքնուած այս անգամ նոր-օսմանիզմի կարգախօսին ներքեւ, եւ որ ոչինչ փոխուած է Թուրքիոյ ցեղապաշտ, բռնատիրական եւ հակաժողովրդավար համակարգին մէջ: Վկայ՝ քրեական օրէնսգիրքի 301-րդ տխրահռչակ յօդուածը, որ կ'ամբաստանէ բոլոր այն մտաւորականները, գրողներն ու ակադեմականները, որոնք՝ հակառակելով թրքական պաշտօնական տեսակէտին, «կ'անարգեն թրքական ազգային ինքնութիւնը»: Վկայ՝ Թուրքիոյ արդարադատութեան համակարգը որ, ըստ էութեան, կոչուած է պաշտպանելու պետութիւնը ընդդէմ իր քաղաքացիներու իրաւունքին: Վկայ՝ խորքային պետութեան ծածուկ եւ հզօր ոյժը, որ կը գործէ ամենուր՝ քուլիսներու ետին, հետապնդելով այլախոհ քաղաքացիները:

Քաղաքական երկրորդ դասը կարելի է համարել այն կարեւոր ըմբռնումը, որ ազգային եւ ընկերային ազատագրութիւնները սերտօրէն առնչուած են իրարու: Այս պատճառով ալ, Հրանդ Տինք սերտօրէն գործակցեցաւ թուրք եւ այլազգի «թուրքիացի» մտաւորականներու եւ գործիչներու հետ, ըլլան անոնք՝ ասորի, քիւրտ, յոյն, ալաուի..., հաւատալով որ ազգային դեմոկրատական դատի մը արդար լուծումը կախեալ է ճշմարիտ դեմոկրատիայի հզօրացումէն՝ Թուրքիոյ մէջ եւ այլուր: Եւ զարմանալի չէ որ իր թաղման վիթխարի թափօրին մասնակցեցան ոչ միայն հայեր, այլեւ ու յատկապէս՝ ժողովրդային դեմոկրատիայի գաղափարով առաջնորդուող, «թուրքիացի» մտաւորականներ ու աշխատատեղեր, հակապետական ցուցարարներ, որոնք կը կրէին ցուցանակներ՝ «Մենք բոլորս հայ ենք», «Մենք բոլորս Հրանդ Տինք ենք», «Մարդասպան պետութիւն», «Ուս-



ուսի՝ ֆաշիզմի դէմ»...գրութիւններով: Նահատակ Հրանդի այրին Ռաքէլ Տինք դիպուկ կերպով պիտի ըսէր.« Այս մեծաթիւ բազմութեան մասնակցութիւնը՝ կերպով մը, ապստամբութիւն էր պետութեան դէմ»: Ապստամբութիւնը՝ Թուրքիոյ բազմազգ ժողովուրդի դեմոկրատական ոյժերուն, ընդդէմ Թուրքիոյ ֆաշիստական համակարգի բռնութեանց: Հրանդ Տինք կը հաւատար, որ՝ իսկական ժողովրդավարութիւնը, ժողովրդային ու ժողովրդանուէր դեմոկրատիան, հանդուրժողականութիւնը, խօսքի ու մտքի ազատութիւնը միայն կրնային արթնցնել թուրք ժողովուրդը իր թմբիբէն եւ զայն առաջնորդել ճանչնալու եւ ընդունելու պատմական ճշմարտութիւնը:

Տակաւին, իրերը իրենց անունով կոչելու իր համարձակախօս քաջութեամբ ալ, Հրանդ Տինք մեծ նահատակը պիտի շարունակէ ոգեշնչել ցեղասպանուած ու հայրենահանուած մեր ժողովուրդի պահանջատիրական պայքարը: Արդարեւ, մինչ ատենի ՀՀ Նախագահ Ռոպերթ Քոչարեան թուրք յայտնի լրագրող Ալի Պիրանտին կը յայտարարէր ի լուր աշխարհին, ըսելով՝ «Հայոց Յեղասպանութեան ճանաչումը իրաւական հիմքեր չստեղծեր հողային հատուցման», մոռացութեան տալով այն կարեւոր փաստը, որ հողին համար էր որ գործադրուեցաւ Յեղասպանութիւնը..., անդին Հրանդ Տինք, անվեհեր մարտիկը, նոյնինքն Թուրքիոյ խորհրդարանի ամպիոնէն կը յայտարարէր. «Դուք ժողովուրդը իր արմատէն կտրեցիք, իր 4000ամեայ հողէն կտրեցիք, իր մշակոյթէն կտրեցիք: Եթէ նոյնիսկ ոսկեայ օղանաւերով տեղահանուած ըլլայիք՝ միեւնոյն է, ատիկա Յեղասպանութիւն է, բռնի տեղահանութիւն է՝ իր հողերէն եւ օճախներէն»:

Չուգահեռաբար, արդարութեան համար աննկուն պայքարող Հրանդ Տինք խորապէս կը վրդովուէր այսօրուան Հայաստանի պատասխանատուներու վարքագիծէն: Մահուան ստոյգ սպառնալիքին դէմ յանդիման, իրեն ուղղուած այն հարցումին, թէ՛ ինչո՞ւ չի հեռանար Թուրքիայէն, ան կը պատասխանէր յստակ ու մեկին. «Բայց ո՞ւր երթայի: Հայաստա՞ն: Ինչպէ՞ս կրնար ինձ նման մէկը, որ կ'ընդվզի անարդարութիւններու եւ անօրինականութիւններու դէմ, հանդուրժել՝ այնտեղ կատարուող անարդարութիւններն ու անօրինականութիւնները: Գուցէ այնտեղ ինձի աւելի՛ մեծ փորձութիւններ կը սպասէին»: Սա ոչ միայն լուրջ մտորումներու պիտի մղէ մեզ, այլ նաեւ՝ զգաստութեան եւ սթափումի հրաւեր է, ուղղուած Հայաստանի Հանրապետութեան պետական այրերուն ու վարչախումբին:

Անկոտրում կամքի, աննահանջ պայքարի վառ օրինակ է Հրանդ Տինքի կեանքն ու վարքագիծը: Ան մնաց եւ դիմադրեց, հակառակ անոր որ ինքզինք կը զգար ամբողջովին անպաշտպան, կը նախզգար իր կեանքի եղերական աւարտը. «Աղանիի մը նման եմ...իմ ձախիս, աջիս, առջեւս եւ ետեւս պատահածներով նոյնքան մտատանջ:...Գլուխս նոյնքան շարժուն է...»: «Մնալ եւ դիմադրել» որոշեց սակայն խիզախ մտաւորականը, մինչ այլ այլախոհներ նախընտրէր էին հեռանալ այնտեղէն, փրկելու համար իրենց կեանքը: Նշանակալից է իր խօսքը այս առիթով՝ «Քանզի՛ մենք մարդիկ ենք, որ կամաւորագրուած են իրենց ապրած դժոխքները դրախտներու վերածելու գաղափարին»: Նմանապէս, իրեն համար





Կենսական էր մնալ ու ապրիլ Թուրքիոյ մէջ «իբրեւ յարգանք Թուրքիոյ մէջ ապրող հազարաւոր բարեկամներու, որոնք կը պայքարին ժողովրդավարութեան համար եւ կը զօրակցին հայերուս: Ուրեմն՝ պիտի մնանք հոս, ու շարունակենք դիմակայումը»: Ահա գլխագիր մարդն ու գաղափարապաշտը:

Եւ վերջապէս, Հրանդ Տինք պատգամախօսն էր Հայ-Թուրք իրա՛ւ, արժանապատիւ երկխօսութեան, երկու ճշմարտօրէն ժողովրդավար պետութեանց միջեւ, եւ ոչ՝ ամերիկեան կայսերապաշտութեան կողմէ տնօրինուած կեղծ եւ նենգ «երկխօսութեան», ուր զօրաւորը իր կամքը կը պարտադրէ տկար կողմին, դրամատիրական վայրի անտառի անխախտ օրէնքով... որուն տխուր ականատեսն ու վկան դարձանք աւելի վերջ՝ «ֆութպոլային դիւանագիտութեան» եւ «Հայաստան-Թուրքիա» փրոթոքոլի արձանագրութեանց տխրահռչակ օրերուն...:

Նահատակ Հրանդ Տինքի խմբագրած «Ակօս»ը դարձաւ իրաւամբ՝ ժողովրդավարութեան, ազգային եւ ընկերային ազատագրութեան, արդարութեան, Հայ Դատի Պահանջատիրութեան գաղափարներու սերմերով յուռթի, որոնք վստահաբար դեռ պիտի ծլարձակուին իր մահէն ետք ալ, անդրանցելով ժամանակի նեղ սահմանափակումը...: Իր պայքարի անկոտրում ու անվիատ ոզին պիտի շարունակէ ներշնչել բոլոր անոնք, որոնք կը պայքարին բռնատիրութեանց, անարդարութեանց եւ անիրաւութեանց դէմ, յանուն ժողովրդային ճշմարիտ դեմոկրատիայի կենսագործման, յանուն ժողովուրդներու կոխկռտուած իրաւունքներու վերականգնումին: Մարդկային ու ազգային արժանապատւութեան վերահաստատումին:

ՅԱՐԳԱՆՔ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Յօդուածներ

### «Մեր Գիւղը»՝ Այո՛, Բայց, Հիմա՛՝ «Մեր Հալէպը»

Պարոյր Աղպաշեան, Պէյրութ

”Հայաստան” Համահայկական Հիմնադրամը, իր ծնունդէն ասդին անտարակոյս, օրինաբեր դերակատարութիւն եւ օգտակարութիւն ունեցած է, Հայաստանի եւ Արցախի լեռնակուտակ կարիքները հոգալու կամ նպաստելու անոնց: Բարեբախտութիւն է, որ թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի եւ թէ՛ ԱՊՀի մէջ, կան բազմաթիւ մեծահարուստ ու գերհարուստ հայեր, որոնք նիւթական ու տնտեսական “կայսրութիւններ” ստեղծած են, ոմանք, միջազգային ոլորտներու մէջ նոյնիսկ գրաւելով բարձրագոյն դիրքեր, ըստ յայտարարուած ու հրապարակագրուած





վիճակագրութիւններու:

Այդ “դասակարգ”էն քանի՞ տոկոսը կ’օժանդակէ իր հայրենիքին ու ժողովուրդին, կ’անգիտանանք, բայց, որոշապէս կան երախտաւորներ, որոնք պատրաստակամ են հանդէս գալու մեծ կամ փոքր նուիրատուութիւններով, մեկենասութիւններով կամ ձեռներեցութիւններով:

Այդուհանդերձ, բաւարա՞ր են ատոնք, հայրենական եւ արցախեան աշխարհին աւելի բարեկեցիկ կեանք մը ապահովելու տեսակետէն: Անշուշտ, ո՛չ, որովհետեւ օգնութեան կարօտ դաշտերը եւ մարզերը բազմաթիւ են: Գաղտնիք չէ. մարզերը, գաւառները, գիւղերը, նոյնիսկ կարգ մը քաղաքները կը գտնուին անմխիթար եւ աննեցուկ վիճակներու մէջ, ուր պետական հովանաւորութիւնը կամ հոգատարութիւնը համարեալ բացակայ է:

Սփիւռքէն դիտելով այդ անբաղձալի վիճակը, ոմանք բարեմտօրէն, ուրիշներ՝ անտեղեակօրէն, մաս մըն ալ՝ պատեհապաշտօրէն կը խանդավառուին (երբեմն ալ՝ հաշուենկատօրէն կ’ուզեն խանդավառել ուրիշները), թէ ամէն ինչ լաւ ու նորմալ է, նկատի ունենալով մայրաքաղաք Երեւանին մէջ սփռուած պէսպիսուն պանդոկները, շքեղ ճաշարանները, գրաւիչ ժամանցավայրերը եւ ընդհանրապէս “գոլխիչ” տեսավայրերը ու “փարթամ” կեանքի տարբեր երեսները:

Այդպիսիներ կը մոռնան (կամ կ’ուզեն մոռնալ ու մոռցնել), որ ստուարաթիւ զանգուած մը զուրկ է այդ “բարիք”ներէն օգտուելու կարելիութիւններէն, իսկ աւելի քան սահմոկեցուցիչ վիճակ մը կ’ապրին արտամայրաքաղաքային շրջանները:

Այս բոլորէն՝ արտագաղթ եւ արտահոսք, հայրենաթափութիւն ու հայաթափութիւն, անզուսպ եւ անսանձ թափով, մինչ իշխանութեան կողմէ՝ ո՛չ մէկ գործնական դարմանում, ո՛չ մէկ յուսադրիչ բարելաւում, ո՛չ մէկ իրագործելի նախաձեռնութիւն, բացի... կարկտան ու կցկտուր կարգադրութիւններէ, մինչ սակաւապետներ (այսինքն “մաֆիոզ”ական տեսակաւոր առանձնաշնորհեալներ)՝ արիւնաքամ կ’ընեն ժողովուրդին մեծամասնութիւնը, իշխանաւորներու զիտակցութեամբ եւ, ինչո՞ւ ոչ, մեղսակցութեամբ:

Զարմանալի է, որ այս սրընթաց անկումին դիմաց, գործող իշխանականները կը շարունակեն իրենց ազգային-պետական “սխրագործութիւնները”, ինքզինքնին աւելի պարարտացնելով, իսկ ժողովուրդը՝ աւելի բարոյալքելով եւ աղքատացնելով:

Ասիկա կը գոհացնէ՞ հայրենի իշխանութիւնները, կը լիցքաւորէ՞ սփիւռքահայութիւնը, որոնցմէ առաջինը կը շարունակէ իր “բռնութիւնները”, իսկ երկրորդը՝ իր “բարօրութիւնները”, հազիւ թէ՛ զիրար տեղ մը գտնելու կամ հասարակաց եզրեր ստեղծելու հաւանականութիւններով: Ինչո՞ւ վերոյիշեալ ընդգծումները, թէկուզեւ արագ հպումներով, մանաւանդ որ այս թղթածրարը միշտ ալ եղած ու մնացած է լուսարձակի տակ, այնքան ատեն որ կը ներկայացնէ հայ ժողովուրդին սուր “վոյթած”ներէն բարձրագոյնը:



Ներկայիս “Հայաստան” հիմնադրամը հրապարակ նետուած է, նոր “թոն”ով մը, որ արդէն իսկ իր լրումին հասնելու վրայ է (կամ հասած է):

Ոչ ոք դէմ է “Հայաստան” հիմնադրամի առաքելութեան, բայց ատենը չէ՞ որ անիկա վերատեսութեան ենթարկուի, երբ Հայաստանը եւ Արցախը այլեւս ի վիճակի են իրենց “իւղով տապկուելու”, այնքան ատեն որ մէկ գործարար մը միայն, կրնայ ամբողջ գիւղի մը, նաեւ... քաղաքի մը շինարար-մատակարարը դառնալ, ալ ու՛ր մնաց որեւէ հանրանպաստ ձեռնարկութիւն մը:

Ճիշդ է, իւրաքանչիւր հայ իր լրուման բերելու է իր հայրենական ծրագիրներուն, բայց, երբ “հզօր Սփիւռք” կարծուածն ու յորջորջուածը ինք սկսած է տկարանալ ու նահանջել (որուն ծանօթ պէտք է ըլլան բոլորը), “Հայաստան” հիմնադրամը, իր ժողովրդանուէր ու ժողովրդամատոյց սլաքները պէտք չէ՞ ուղղէ դէպի Սփիւռք, փոխանակ ակնկալէ անկէ:

Սփիւռքի մէջ հայապահպանման գործօնները սկսած են երերալ, իրենց ամենէն նուիրական չափանիշներէն (լեզու, ուսուցիչ, գործիչ, մամուլ, եւայլն), ոչ թէ համապատասխան մարդուծի բացակայութեան, այլ գերազանցապէս տնտեսական պայմաններու վտիտութեան կամ չգոյութեան պատճառներով:

“Հայաստան” հիմնադրամի պատասխանատուներ, հոն՝ Հայաստանի, թէ հոս՝ Սփիւռքի մէջ, պէտք է գիտնան, թէ Հայաստանը եւ Արցախը մեր անփոխարինելի կռուաններն են մեր գոյութեան եւ ազգային պահանջատիրութեան:

Այսօր, Սփիւռքի ամենէն բարախուն ու թթխմոր հայագաղութը՝ սուրիահայութիւնը, կ'անցնի խիստ վտանգաւոր հանգրուանէ մը, “Հայաստան” հիմնադրամը չէ՞ր կրնար իր “ռատիօթոն”ը կամ “Հալէպաթոն”ը այս տարի ամբողջութեամբ յատկացնել սուրիահայութեան, փոխանակ “փոքր” տոկոս մը անոր յատկացնելով, իսկ լիբանանահայութեան ձեռներեցները (այսինքն՝ հարուստներուն-հարուստները) իրենք հոգային իրենց գաղութին-համայնքին կարիքները, որոնց թուումը այդքան ալ դժուար պիտի չըլլար (բայց, ատիկա ալ ուրիշ առիթով...):

Ասիկա ինչո՞վ կը պակսեցնէր հիմնադրամին հեղինակութենէն կամ ո՞ր կը շեղէր իր առաքելութենէն, այնքան ատեն որ “հզօր Սփիւռք”էն հսկայական բեկոր մը վտանգուած է ու կարօտ՝ համահայկական նիւթաթիկունքի: “Մեր գիւղը” կարգախօսը (ցաւօք ուշացած) հոյակապ նախաձեռնութիւն մըն է, որուն պատասխանատուութիւնն ու պարտաւորութիւնը կ'իյնան պատկան կողմերուն վրայ, սակայն, ա՛յս հանգրուանին, հրատապ լոգունգը պէտք է հնչէ՛. “ՄԵՐ ՀԱԼԷՊ”ը (իմա՝ սուրիահայութիւնը):

Իսկ ասոր մէջ ոչ մէկ քաղաքական արեւելում կայ, ոչ ալ կողմնակցութիւն, այնքան ատեն որ “մարդասիրական օժանդակութիւններ” կը հասնին հոն: Մեր այս խորհրդածութիւնները որեւէ ձեւով “Հայաստան” հիմնադրամը ստուերել չեն միտիր, բայց, անհրաժեշտ է անոր տեղն ու դերը ՃԻՇԴ բնորոշել, մանաւանդ անոնց կողմէ, որոնք սփիւռքահայ իրականութեան մէջ կը յաւակնին ըլլալ առաջնորդներ կամ անոր մէջ՝ ներկայացուցիչներ:





Իսկ այդ տեղն ու դերը ի՞նչ կրնան ըլլալ, բացի հասկնալու պահու ու հրամայականութեան լրջութիւնը, առաւել՝ “աւանդակութիւնը” չծառայեցնելու... “աւանդական” գործելաձեւի մը, որն է՝ “աւանդականօրէն” “թելէթոն” իրականացնելը, որովհետեւ պահանջաձը “մերն” է, ասիկա ըլլայ գիւղ թէ այլ տարբերակ, բայց հիմա՝ ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԻՒՆ:

Կ'ըսուի՝ “հասկցողին շատ բարեւ”, բայց, չհասկնալու բան մը կա՞յ ասոր մէջ...:

## Գրական-Մշակութային

### ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ՀԵՏ

### ԾՆՆԴԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(1903-1974)



1913 թուականը 110-ամեակն է՝ յետ-Եղեռնեան Սփիւռքի ցարդ չգերազանցուած արձակագիր Շահան Շահնուրի ծննդեան: Գրող՝ որ հեռացաւ այս աշխարհէն ոչ միայն ֆիզիքական անտանելի ցաւերով տառապակոծ, այլեւ՝ զինք ծնած հարազատ ժողովուրդէն գէշ հասկցուած ըլլալու հոգեկան խոր վիշտը սրտին:

Պոլիս ծնած ու մեծցած Շահնուրը՝ վաղ երիտասարդութեան տարիներէն, ապրեցաւ Բարիզի մէջ, կրելով տարագիր հայ մարդու անպատմելի դժուարութիւններն ու դառնութիւնները, ցմրուր ճաշակելով հարազատ եզերքներէն աքսորեալ մարդու ողբերգական տրամը, որ տրամն էր նաեւ, առաւել կամ նուազ

չափով՝ բռնի հայրենահանուած, Հայոց Յեղասպանութեան գեհէնէն անցած, տարագիր մեր ժողովուրդին ընդհանրապէս եւ սփիւռքահայ մէն մի անհատին մասնաւորապէս: Եւ ահա՝ դաժան անողորմութեամբ, այլեւ բարձր արուեստով, Շահնուր պիտի տար այդ իրականութեան ճշմարտացի պատկերը իր գրական երկերուն, ի մասնաւորի՝ իր ամէնէն հօր վէպին՝ «Նահանջը Առանց Երգի» վէպին մէջ, շեշտակի նայելով այդ դաժան ու բիրտ իրականութեան աչքերուն մէջ, առանց տարուելու՝ ինքնախաբէութեան կամ պատրանասիրութեան թելադրած դիրին լուծումներու հրապոյրներէն...., այլ գովելի ու յախուռն ճշմարտախօսութեամբ ու համարձակախօսութեամբ: Իրերը կոչելով իրենց անունով...:

Սակայն, ինչպէս Շահնուր ի՛նք կը գրէ տեղ մը իր վերոնշեալ վէպին մէջ՝

«Խօսքեր կան, գորս չենք ուզեր լսել, ցաւեր կան, որոնց չենք ուզեր անդրադառնալ, կը փախչինք անոնցմէ, որովհետեւ իրապէս մեծ են...»:



Եւ կը թուի թէ սա էր պատճառը այն քինախնդիր արշաւին, այն խաչակրութեան, որ սանձազերծուեցաւ գրողին դէմ, զայն դատապարտելով մենութեան եւ բարոյական յուսալքութեան: Հուսկ, իր կեանքի վերջին տարիներուն՝ Սէն-Ռֆաֆայէլի ծերանոցի հիւանդի ցուրտ մահճակալին՝ ֆիզիքական եւ հոգեկան ցաւերով ծանրաբեռն:

Շահնուրի անունը նոյնացած է իր ստեղծագործած հզօրագոյն երկին՝ «Նահանջը Առանց Երգի» վեպին հետ, ուր գրողը՝ զոյգի մը սիրոյ պատմութեան հետ, վիպական բարձր արուեստի միջոցով, կը միահիւսէ մեր ժողովուրդի արեւմտահայ տարագիր հատուածին վերապահուած տագնապներուն տագնապը – նահանջը սեփական արմատներէն ու հարազատ ինքնութենէն: Բարիզ նետուած հայ տղոց կեանքի այս վիպական պաստառադրումը կը միտի ախտանշելու՝ անհայրենիք ու աշխարհի երեսին ցրուած ազգի մը բեկորներուն սպառնացող հայակուլ ու հայաջինջ, սպիտակ կամ անարիւն եղեռնը, եւ ահագանգ մըն է ուղղուած համայն սփիւռքահայութեան: Արդարեւ, Պետրոսներու, Սուրեններու, Հրաչներու եւ «լոխում»ներու ապրած կեանքի եղերականութիւնը ընդհանրական է ամբողջ սփիւռքին համար ալ: Եւ Շահնուր կը հաստատագրէ այդ գերագոյն տագնապը՝ անմոռանալի, սիրտ բզքտող տողերով՝

«Նահանջը հոգիներու, գլխու պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան:...Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբռում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին»:

Երկփեղկուած է այս տղոց ճակատագիրը, ինքնութիւնը: Մէկ կողմէ, անոնք՝ անձնատուր օտար կիներու, Նենէթներու հրապոյրին ու քմայքին, ընդառաջ կ'երթան օտարացման զառիթափն ի վար: Միւս կողմէ՝ անոնք կ'ապրին անդրադարձի տխուր ու տխրեցնող պահեր, երբ կըգոռան իրենց էութեան խորախորհուրդ ծալքերուն մէջ անթեղուած զայրոյթը.

«Ի՞նչ, ի՞նչ, նորէն ֆրանսերէն թերթ, նորէն ֆրանսական թատրոն, ատոնց հայերէնը չկա՛յ: Չպիտի՞ ըլլայ, որ դուք սանկ մէյ մը ցնցուիք, գիտակցիք մեր վիճակին. Չպիտի՞ ըլլայ որ կռուիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դէմ: Մարած մոխիրներ՝ բոլորդ ալ, կաշիի վաճառականներ՝ բոլորդ ալ...: Մենք ալ հայրենիք մը ունինք. Պետք է պատրաստ կենանք հոն երթալու:...Ուրկէ՞ կրակ պիտի գտնենք երթալու համար կռուի, որովհետեւ, այո՛, կոխ պիտի ունենանք մենք, որքան ատեն, որ տակաւին ոտքի կաթողիկէ մը ըլլայ եւ ձիւնագարդ գագաթ մը լեռան, որքան ատեն որ մեր երակներուն մէջ արիւնին հետ եռացող «մեր հայրենիք» մը ըլլայ, որքան ատեն որ «մեր հայրենիքը» չըլլայ...»:

Գիտակցաբար թէ անգիտակցաբար, այս տղոց հոգիները տակաւին կը ճենճերին հրակէզ կարօտովը՝ «պճեղ մը անոյշ սիրտ»՝ մայրական սիրոյն, իրենց ծննդավայրին, հայրենիքին, մասնաւորաբար հայոց լեզուին, զոր փոխարինել երբեք պիտի չկարենար օտար լեզուն՝ ֆրանսերէնը: Քանզի անոր մէջ չկայ «կարօտ» բառը.

«Ֆրանսերէնը գոյութիւն չունի «մա՛յր» բառին, «հա՛յ» բառին, «աքսոր» բառին...ֆրանսերէնը չկա՛յ մեր «զաղթական»ին, մեր «որբ»ին...»:

Գերագանցօրէն՝ օտարացման, ուժացումի ազգայնակուլ աղէտին դէմ, մաքառման ոգի հրահրելու համար էր, որ Շահնուր այնքան անողորօքէն իրապաշտ ոճով,



ինչպէս եւ յանդուգն ու խիզախ գրիչով բարձրաձայնեց իր ախտանշումը, մատը դնելով կոտտացող ու արինոտ վերքին վրայ եւ գրեց առանց ծամծմելու բառերը՝ ուղիղ եւ յստակ: «նահանջը Առանց Երգի» վեպը կը մնայ, անտարակոյս, ցարդ չգերազանցուած սփիւռքահայ տարագիր ու հայրենագուրկ կեանքի ողջ տազնապն ու ողբերգականութիւնը պատկերող՝ իր գաղափարական միտք բանիով եւ մանաւանդ՝ իր գեղարուեստական ներգործութեան հզօրութեամբ: Այստեղ ընդգծելու ենք, սակայն, որ պարտուողական չէ երբեք ոգին Շահնուրի: Այլ, սրբազան ըմբօստ մըն է ան, որ տակաւին կը հաւատայ յոյսին եւ սիրոյն: «Յարալէզներու Դաւաճանութիւնը» գրութեան մէջ, ան իր հոգիին աղաղակը կ'ուղղէ Հայոց Անահիտին՝ հոգիէն ժայթքող լուսայորդ պաղատանքով.-

«Իջի՛ր կրկին հօտիդ մէջ, փառքդ զեղու հայրողիներուն վրայ, գրաւէ դարձեալ քու թափուր բագինդ: Դի՛ր, դի՛ր լուսապսակդ մեր ցնցոտիներուն շուրջ: Այո, սերը նուագած է մեր մէջ, բայց չէ ցամբած: Մերի՛ն Անահիտ, շող մը միայն ճաճանչէ, եւ մենք պիտի ցցուինք կրկին անճառելի արշալոյսին մէջ, պիտի յառնենք որպէս թէ համբուրուած ըլլայինք ամենագոր յարալէզներէ...»:

Այսօր, Շահան Շահնուրի ծնունդէն հարիւր տասը տարի ետք, ժամանակի անջրպետը տակաւ կը յստակացնէ մեծութիւնը գրական այն երեւոյթին, որ կոչուեցաւ ՇԱՀՆՈՒՐ՝ արժանի մեր եւ յետագայ սերունդներու ջերմ գնահատանքին ու երախտագիտութեան: Խորապէս ազգային ջիղով օժտուած, իրա՛ւ արուեստագէտ-գրողն էր ան, որ իր հզօր երկով ու երկերով մեզ հրաւիրեց խորունկ ինքնաճանաչման, դարձաւ արթնութեան ահագանգ ու զգաստութեան եւ պայքարի կոչ՝ սփիւռքահայ կեանքի՝ բարոյական եւ ազգային աղճատման, ձուլման ու այլասերման, ՆԱՀԱՆՋԻ առաջնորդող ցաւագին իրականութեան դէմ յանդիման...: Ներկայիս, համաշխարհայնացող եւ տակաւ հոգեզրկուող, ազգ ու ինքնութիւն ջնջել սպառնացող մեր ժամանակներուն յատկապէս, այնքա՛ն այժմեական կը հնչեն Շահնուրի ահագանգող եւ զգաստացնող տողերը...,մանաւանդ որ Հայաստանէն արտագաղթը օրէ-օր արինաքամ կ'ընէ մեր ժողովուրդը, սպառնալով ազգային մեր անվտանգութեան, մինչ հայրենամերձ հայագաղութները կը դիմագրաւեն նորանոր, կենաց-մահու մարտահրաւերներ...: Մենք ալ պիտի կրկնէինք Շահնուրի տողերը, գրուած իր «Զոյգ մը Կարմիր Տետրակներ» գրութեան մէջ.-

«Իցի թէ վերջ գտնէ օտարացման վտանգը եւ ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ գիրքը հիննայ եւ կորսնցնէ գոյութեան ամէն իրաւունք»:

ԻՅԻԻ ԹԷ...Իրականութիւնը այլ է սակայն: Այսօր մենք պէտք ունինք նոր Շահնուրներու, որ իրենց գեղարուեստական խօսքի հզօրութեամբ կարենան ահագանգել՝ Հայաստանէն եւ Արարատէն արտագաղթող խուճապահար բազմութիւններու ՆԱՀԱՆՋԸ եւ Հայրենիքի ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ...:

Յարգա՛նք եւ պատի՛ւ Շահնուրի մեծ վաստակին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## « Յուշագրութիւն » ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ |

### Դէպք

Հին թղթերիս մէջ բան էի փնտռում, ձեռքս անցաւ քսանհինգ տարի առաջ տեղի ունեցած դէպքի այս գրառումս, որ թեպէտ օրագրային, բայց արել եմ մի քանի առանձին թերթերի վրայ, ոչ թէ օրագրիս տուեալ տարուայ տետրում, եւ խառնուել է ուրիշ թղթերի մէջ: Դէպքը լաւ յիշում էի անշուշտ: Իսկ երբ անակնկալի նման յայտնուեցին աչքիս այդ թերթերը եւ կարդացի գրառումը, քառորդ դար յետոյ, ոչ միայն տարօրինակ, այլև գրեթէ անհաւատալի թուաց այդ դէպքը նոյնիսկ ինձ, որքան էլ յիշողութիւնս պահպանել է անգամ չգրառուած որոշ մանրամասնութիւններ: Լաւ է, ուրեմն, որ հիմնականը գրի եմ առել ժամանակին, եւ կարծում եմ՝ հենց այս օրերին շահեկան է ընթերցողին մատուցել:



Խոր ձիւնառատ ձմեռ՝ 1983 Փետրուար: Գրողների միութիւնից գանգ՝ Սաղաթելը շտապ կանչում է ինձ: Թէ՛ երկու «խենթ» իռլանտացի գրող այս ձիւն-բուքին ժամանել են Հայաստան, հենց Գրողների միութիւն են գալու հիւրանոցից: Կցուած թարգմանիչ կը լինի, անշուշտ, բայց ես գամ, նրանց հետ անմիջականօրէն խօսեմ անգլերէն, տեսնենք ինչ է ինչդիրը...

Երկու իռլանտացի գրող՝ ձմռան կէսին: Տարօրինակ է իրօք: Ի՞նչն է մղել նրանց Հայաստան գալու: Շտապ գնացի: Մէկը միջին տարիքի քննադատ՝ Թոմ Կրոնին, միւսը երիտասարդ բանաստեղծ՝ Փիթըր Դուրկա: Միրալիր ծանօթացման գրոյց, ընդհանուր խօսքեր, ու դեռ ոչ մի կոնկրետ խօսք իրենց գալու նպատակի մասին: Մենք էլ, իրենք էլ շուարած մի քիչ: Ձմեռ չլինէր, ասացինք, անշուշտ իրենց կը տանէինք, որ տեսնեն մեր երկիրը, մեր պատմական յուշարձանները: Ես սիրով կ'ուղեկցէի նրանց, ինչպէս յաճախ եղել է օտարների հետ: Բայց հիմա գրեթէ մեթրանոց ձիւն է նստել ամէն կողմ, ծանրօրէն ամպամած երկինքն էլ, ձիւնը շարունակում է տեղալ:

- Մի՛ անհանգստացէք,- ասաց յանկարծ Թոմ Կրոնինը, որ աշխոյժ, լեզուն պտտուող մարդ էր ու իսկոյն ընկալեց դրութիւնը:- Ես եկել եմ, ճիշդն ասած, յատկապէս Ուիլիամ Սարոյեանի գերեզմանին... մեծ գրողի երկրպագուն, գիտէ՞ք... Քչախօս, լրջադէմ Փիթըր Դուրկան իսկոյն վրայ բերեց մեղմ ժպիտով.  
- Իսկ ես՝ յատկապէս Մարտիրոս Մարեան մեծ նկարչի տուն-թանգարանը: Ահա ուրեմն ինչն է նրանց մղել Հայաստան գալու: Տարօրինակից էլ աւելին, խոր ձմռանը Դէպք:

Առատ, մաքրամաքուր ձիւնը ծածկել էր Ուիլիամ Սարոյեանի գերեզմանը Պանթէոնում: Հակուեցի, որ քերէմ ձիւնը գերեզմանի գլխի յուշատախտակից:

- Թոյլ տուէք, խնդրում եմ,- ասաց Կրոնինը,- ես իմ ձեռքերով...



Ու քերեց, մինչեւ Սարոյեանի անունը երեւաց սեւ կրանիթի վրայ: Երկիրաժողովուրդեամբ դնելով վառ կարմիր մեխակները, որ առել էինք ճանապարհին, նա մի բոպէ, հայեացքը յուշատախտակին, լուռ կանգնեց գլխահակ: Մի քայլ ետ՝ Դուրկան ու եւ էլ կանգնած էինք լուռ: Դուրկայի ձեռքին՝ կարմիր մեխակներ:

- Գիտէ՞ք,- խօսեց Կրոնինը,- մի այնպիսի՝ զգացում կայ իմ մէջ: Սարոյեանի երկրպագուն եմ եղել պատանեկութեանս օրերից: Միշտ պատկերացրել եմ նրան կենսասիրութեան ու մարդասիրութեան մարմնացում՝ իր պայծառ ոգու գիտակցական, անսովոր լաւատեսութեամբ եւ միաժամանակ՝ թախծոտ ու խոր հումանիստ: Բայց ահա նա էլ վերջապէս... Լռեց: Քիչ յետոյ աւելացրեց,- Բայց զարմանալի է, մեզ մօտ թերթերը չտեղեկացրին անգամ, որ նա՝ ամերիկացի մեծ գրող, ցանկացել է իր աճիւնը հանգչի իր նախնիների երկրում՝ ահա այստեղ: Պատահաբար իմացայ Մոսկուայում, եւ հաւատացէք՝ իռլանտացու իմ սիրտը խոր գոհունակութիւն զգաց: Միշտ էլ երբ կարդացել եմ Սարոյեանին, մտքովս անցել է տեսնելի նրա պապերի երկիրը: Եւ ահա հենց Մոսկուայից էլ իսկոյն եկանք Փիթըրի հետ...

Երբ ասացի, որ բախտն եմ ունեցել, քսաներեք տարի առաջ, պատահաբար Սարոյեանին հանդիպելու Մոսկուայում եւ ամբողջ երկու երեկոյ նրա հետ եմ եղել, Կրոնինը յանկարծ ձեռքս բռնեց ու սեղմեց անակնկալ մի ջերմութեամբ.

- Օ՛, նախանձում եմ ձեզ...

Ու խնդրեց, որ պատմեմ այդ իմ հանդիպումից գէթ մի քանի բան: Պատմածն այն եղաւ, որ այդ երկու երեկոներին էլ հարազատ եմ զգացել Սարոյեանին հենց որպէս հայի, երկուսս էլ խօսելով արեւմտահայերէն, երկուսս էլ գաղթական ծնողների զաւակ, աշխարհում իրարից շատ հեռու ծնուած, նա՝ Ֆրեզնոյում, եւ՝ Աթէնքում, բայց մանկուց մեր ապրած ընտանեկան կենցաղով ու աւանդոյթներով այնքան իրար մօտիկ, մեր հիմնարար ներաշխարհով այնքան հարազատ, որ երբ նա իր մանկութիւնից էր պատմում իրեն յատուկ համով-հոտով, եւ գրեթէ նոյնութեամբ իմ մանկութեան մթնոլորտն էի յիշում...

- Զգում եմ, զգում եմ ձեր ասածը,- գոչեց իռլանտացին:

Ապա մօտեցանք Մարտիրոս Սարեանին, եւ Փիթըր Դուրկան էլ իր ծաղիկները նրա գերեզմանին դրեց: Իսկ Սարեանի տուն-թանգարանում ազատուեցինք ձիւնից ու վերարկուներից: Բայց ափսոս, բացակայ էր տնօրէն Շահէնը՝ Սարեանի ստեղծագործութեան հմուտ գիտակն ու անխոնջ նուիրեալը, որ անընդհատ ցուցահանդէսներ, հրատարակութիւններ, հեռուստատեսային եւ այլ հաղորդումներ է կազմակերպում եւ դասախօսում ամենուրեք, ոչ միայն Հայաստանում եւ Սովետական Միութեան մէջ, այլեւ արտասահմանում: Երեք տարի առաջ կազմակերպեց նաեւ Փարիզի հռչակաւոր Փոմփիտու կենտրոնում Սարեանի ստեղծագործութեան այն ներկայացուցչական յոյժ կարեւոր ցուցահանդէսը, ուր այցելել է Ուիլիամ Սարոյեանն էլ ու գրել յօդուած, որ անմիջապէս լոյս է տեսել Փարիզում հրատարակուող «Ինտերնէյշնըլ Հերալտ Տրիպլին» թերթում (մի օր



պէտք է անպայման թարգմանեմ այդ յօդուածը, որի բնագիրը Սարոյեանը նուիրել է Շահէնին):

Շահէնը չի զլանում անձամբ ուղեվարի դերը կատարելու, երբ յատուկ հիւրեր են այցելում թանգարան, ամէն անգամ էլ նոյն ոգեւորութեամբ, ջերմ ու կոռ մատուցում է Սարեանի ստեղծագործութեան էական գծերն ու իմաստը: Չկար նա, եւ ինքս ուղեվարի դեր ստանձնեցի: Բայց տեսայ՝ բացատրութիւնների կարիք էլ չկայ նրանց համար, ընկալող աչքեր: Անցնում էինք նկարից նկար, որոնց ստեղծման թուականի առնչութեամբ տեղեկութիւններ էի միայն տալիս Սարեանի կենսագրութիւնից: Թո՛ւմ Կրոնիկի հիացական արտայայտութիւնները աւելի ու աւելի էին աշխուժանում, ասում էր, որ աւելի լաւ է հասկանում հիմա իր սիրած գրողին, ահա տեսնելով նրա «նախնիների երկրի ոգին» այստեղ: Իսկ քչախօս Փիթըր Դուրկայի գունատ դէմքին մեղմ վարդագոյն էր երեւացել, աչքերի մէջ՝ ներսից ճառագող փայլ...:

Ինձ շատ էր հետաքրքրում, թէ ինչն է այդ իռլանդացի երիտասարդ բանաստեղծի բուն խորքից մղել նրան գալու այս հեռու երկիրը՝ յատկապէս Սարեանի թանգարանն այցելելու: Բայց յետագձում էի հարցս, չէի ուզում խանգարել նրան, դէմքի արտայայտութիւնից զգալով, որ այստեղ ամէն մի բոպէն թանկ է նրա համար: Երբ ցուցասրահներում շրջելուց յետոյ մտանք Սարեանի արուեստանոցը, նա զգոյշ քայլերով մօտեցաւ մուլպերթին, որի վրայ մնում է մեծ նկարչի վերջին անաւարտ գունանկարը, եւ ասաց կարծես ինքն իրեն, շշնջալու նման

- This is a holy place! Սա սուրբ տեղ է:

Արուեստանոցից դուրս գալուց յետոյ խնդրեցին վերադառնալ ցուցասրահ: Եւ ամէն մէկն առանձնացաւ, լուռ կանգնելով այս կամ այն նախընտրած նկարի առջեւ: Իսկ ես, մեկուսի կանգնած, նայում, հետեւում էի բանաստեղծին: Տեսայ՝ յատկապէս երկար մնաց «Գեղամայ սարեր» նկարի առջեւ:

- Փիթըր,- մօտեցայ իրեն,- այս նկարը ձեզ շատ գրաւեց:

- Դա է հենց,- պատասխանեց նա:

Թուաց՝ խորհրդաւոր մի բան կար այդ պատասխանի մէջ: Պահը ինքնին էր եկել, ու վերջապէս տուի հարցս: Ասես անակնկալի եկած նայեց ինձ մի վայրկեան, ապա կրկին դարձաւ ամբողջ նկարն ի վեր բարձրացող լուսաջերմ նարնջագոյնին: Ու սկսեց խօսել՝ մէկ նկարին նայելով, մէկ ինձ, նոյնիսկ թեթեւ կարմրելով շփոթուածի պէս: Աչքերում խորքային մի լոյս երեւաց, ասես նուիրական գաղտնիք էր բացում, քչախօս լեզուն էլ բացելով:

- Ես ծնուել եմ Իռլանտիայի մի փոքրիկ քաղաքում: Մի կանաչ լեռ կայ մեր քաղաքի մօտ: Սրբազան լեռ է: Յատուկ տօնի օր ունի: Գիշերով ժողովուրդը բարձրանում է լեռան գագաթը՝ արեւածագը դիմաւորելու: Հենց այդ է տօնի խորհուրդը: Թերեւս հին դարերից անանդոյթ՝ արեւի պաշտամունքի հետ կապուած: Ես վաղ մանկութիւնից ամէն տարի մասնակցել եմ այդ տօնին: Դա խոր տպաւորութիւն է թողել իմ մէջ: Մանկութիւնից յարատեւող ամենաուժեղ տպաւորութիւնը, որ հոգուս խորքում





մշտական ապրումի է վերածուել: Ծագող արեւի ապրումը: Ինձ շատ էր գրաւում մանաւանդ այն պահը, երբ շառագունած հորիզոնից արեւի առաջին ոսկի ցուլքերն էին երեւում, յետոյ սկսում էր բարձրանալ հրաշէկ գունդը: Կլոր կենդանի դէմքի նման, որ թոււմ էր՝ ինձ է նայում եւ նայում բոլորին: Աստուածային հմայող դէմք: Այն սոնական զգացումով այդպէս էի ընկալում, երբ փոքր էի: Ու նաեւ թոււմ էր ինձ՝ ամենազարմանալին, թէ մոզական մի աշխարհ կայ այնտեղ, հեռունէրում, եւ այդ աշխարհից է ծագում Արեւ-դէմքը, բարձրանում, նայում ինձ ու բոլորին, ամէն ինչի, որ տեսնում էի շուրջս խաւար գիշերից յետոյ: Յուզում էր ինձ այդ հեռու մոզական, խորհրդաւոր աշխարհը: Գուցէ բիրիլական պատմութիւնների արձագանգն էր դա իմ մէջ, որովհետեւ այդ աշխարհը պատկերացնում էի հենց Մերձաւոր Արեւելքում: Աւելի ճիշդ՝ Փոքր Ասիայում: Զգիտեմ ինչու, ինձ կախարդական էին թոււմ այդ երկու բառերը՝ Փոքր Ասիա: Մանկապատանեկան այդ պատկերացումս յարատեւեց, մտասուեռում դարձաւ, չնայած հետագայ գիտելիքներին՝ աշխարհագրական թէ պատմական: Ներշնչման պէս մի մտասուեռում, որ ինձ խորքից մղում էր մի օր անպայման ճամբայ ելնել ու գնալ տեսնելու այդ աշխարհը: Մի երեք տարի առաջ Փարիզում էի, այցելեցի Փոմփիտու կենտրոնը եւ գրեթէ պատահաբար գտնուեցի մի գեղանկարչական ցուցահանդէսում: Դժուար է նկարագրել, թէ ինչ զգացում բռնկուեց իմ մէջ առաջին իսկ հայեացքից: Թուաց՝ մեր այն սրբազան լեռն եւ բարձրացել, ծագած եւ բոլորին ու ամէն ինչ լուսաւորած, գունազարդած Արեւի սոնական ապրումն է վերազարթնել իմ մէջ: Հրաշքի նման էր: Եւ սակայն... նկարչի անունն իսկ անձանօթ՝ Մարտիրոս Սարեան: Իմացայ, որ դարասկզբին գլուխգործոցներ ստեղծած հայ նկարիչ է, ու զարմացայ, որ հարիւր տարի առաջ է ծնուել, ապրել է իննսուներկու տարի, իսկ ես նրա մասին չէի լսել նոյնիսկ, եւ ոչ միայն ես, ո՛չ միայն ես, հասկանո՞ւմ էր...

Ասես յանդիմանական զարմանքով ուղիղ նայեց ինձ, ապա դարձեալ՝ «Գեղամայ սարեր» նկարին, որի առջեւ կանգնած էինք մնում:

- Նայում էի այս նկարին,- ասաց կարծես ինքն իրեն շշնջալու նման, ինչպէս արուեստանոցում մոլլերթին մօտենալիս,- նայում էի եւ թուաց՝ մանկութեանս Արեւ-դէմքն է ինձ նայում եւ լսում եմ մի ձայն. «Ահա տեսնում ես այստեղ հիմա, սա կախարդն է այն մոզական աշխարհից»...

Իսկ իմ մտքում հնչեց. «Արեւորդին»:

Լռեց նա, եւ էլ չկարողացայ խօսել մի բոլոր: Գրեթէ անհաւատալի էր թոււմ իռլանտացի այս բանաստեղծ տղայի պատմածը, որովհետեւ այնքան հարազատ էր հայ մարդու իմ հոգուն: Հարազատ էր մոզական մի աշխարհից ծագող Արեւի ապրումը, որ ինքս էլ ունեցել եմ յիսուն տարի առաջ մանկութեանս, երբ Աթէնքի մօտ ամառանոցում հայրս վաղ առաւօտեան մութուլուսին լեռ էր տանում ինձ, որպէսզի «առանց խօսելու նայելով՝ արեւուն ծագելուն խորհուրդը զգանք», ու յետոյ երգում էինք իր սիրած, հետագայում ամբողջ կեանքումս իմ էլ ամենասիրելի, առաւօտեան հոգիս պայծառացնող, դառնութիւններից մաքրող Արեւազալի «Լոյս,արարիչ լուսոյ, առաջին լոյս» երգը: Հարազատ էր նաեւ այն հրաշքի նման



պահի զգացողութիւնը, որ ինքս էլ մի ժամանակ ունեցել եմ Սարեանի նկարների առջեւ առաջին իսկ հայեացքից:

- Բայց ափսոս,- ասացի,- որ այսպիսի ձմեռ օրով եկաք Սարեանի երկիրը: Պէտք է արելը տեսնէիք այստեղ:

- Օ՛, նոյնիսկ մոռացել էի, որ դուրսը ձմեռ է,- ժպտաց նա: – Բայց ես տեսայ՝ Արեւը այստեղ,- շեշտեց: – Արեւի ոգին: Լոյսը...

Ձեռքը մեկնեց «Գեղամայ սարեր» նկարին, յետոյ շրջանաձեւ՝ ամբողջ ցուցասրահին եւ Սարտիրոս Սարեանի տուն-թանգարանին...

1983-2008

## ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

### ՄԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

-Այս շաբաթ օր Taunus-ը նորէն պիտի անցընես, գիտնա՛ս, ուրիշ տեղ խօսք չտա՛ս, հա՛ ...



Վրէժն է, դասընկերս եւ Taunus-ն ալ՝ իր ֆորտ տիպի Սուրիական թիւով ինքնաշարժը, որ չեմ գիտեր ինչ-ինչ օրէնքներու բերումով, տարին մէկ կամ երկու անգամ պայման է որ ճեղքէ Լիբանան-Սուրիա սահմանը, որպէսզի նորոգուի անոր շրջագայութեան արտօնագիրը Լիբանանի մէջ: Դէպի Սուրիա անցքի գործողութիւնն ալ պէտք է կատարուի Լիբանանցի վարորդի մը կողմէ, անկէ անդին, ա՛լ կարելոր չէ, թէ ո՞վ է

քշողը կամ սահմանէն նոյն ինքնաշարժով վերադարձողը:

Ահա հոս կը կայանար իմ վարորդի բարեկամական պարտականութիւնս, գոր կատարած էի նախապէս այլ առիթով մը եւս:

Վրէժին հետ մեր կապերը սկսան Կիպրոս, ուր ժամանեցինք, ինք՝ Հալէպէն, ես ալ՝ Պէրութէն եւ եղանք դասընկերներ Մելգոնեանի մէջ: Բարեկեցիկ ընտանիքի զաւակ էր, ճարպիկ, վառվռուն, կատակասէր եւ արդէն իսկ կանուխ այդ տարիքին ճարտար դաշնակ նուագող, ինչ որ կը հաստատէր իր ընտանեկան իրավիճակը: Տարի մը մնաց միայն, չկարենալով վարժուիլ գիշերօթիկի պայմաններուն, վերադարձաւ Սուրիա, վերջը անցաւ Լիբանան, ուր բախտը դարձեալ մեզ իրարու մօտ բերաւ համալսարանական տարիներուն: Պէրութի մէջ եւս լայն շրջանակ եւ փարթամ կեանք ունէր, այն քիչերէն՝ որոնք 60-ական թուականներու սկիզբը անձնական ինքնաշարժով մուտք կը գործէին համալսարանի մայր դարպասէն եւ կամ ճաշարաններու մէջ կը լռեցնէին իրենց



ստամոքսի կրկնօրը, մինչ մենք՝ «թֆրան»ներս (աղքատ), հանրակառքէ հանրակառք ուստոստելով եւ ֆէլէֆիլի սանտուիչ մը մեր ձեռքին, կը փորձէինք մեր ուսանողութիւնը իմաստաւորել օր մը՝ իրեն նմանելու երիտասարդական յոյսերով...

-Թերեւս պէտք չըլլար մինչեւ Դամասկոս գալու: Շատ-շատ սահմանէն service taxi-ով ետ Պէյրութ կու գաս, ես ալ անկէ անդին կը շարունակեմ ճամբաս: Եղած-չեղածը մէկ երկու ժամուան հարց է: OK է, չէ՞:

-Հա՛, հա՛, OK է, OK, կ'երթանք: Սիրո՛վ:

-Շաբաթ օր կ'եսօրէ ետք ժամը երեքին ձեր տան առջեւ կ'ըլլամ:

Շաբաթը եկաւ եւ խոստացուած ժամուն փողոցէն լսեցի Taunus-ին կոչինչը: Սօրս բացատրած էի հարցը, ուստի նորոգեցի պատուէրս, որ չմտահոգուի եթէ երբեք քիչ մը ուշանամ ու իջայ վար:

Մեծ եղաւ զարմանքս, երբ տեսայ որ ինքնաշարժը լեցուն է: Կը կարծէի որ ես ու Վրէժը պիտի ըլլանք միայն, բայց տարիքոտ գոյգ մը՝ Պատուէլի մը եւ իր կինը, երիտասարդ աղջիկ մը՝ Վրէժին զարմիկը եւ անոր զիրկն ալ տակաւին՝ իր նորածին մանկիկը՝ հազիւ քանի մը ամսու սղմուած նստած են ետեւի աթոռին վրայ:

-Այս ի՞նչ է Վրէժ, լեցուն կ'երթանք կոր...

-Այո, այո, բոլորն ալ Հալէպ երթալիք են, վերջին վայրկեանին կարգադրուեցաւ:

Կը ծանօթանամ բոլորին հետ եւ առանց ժամանակ կորսնցնելու ճամբայ կ'ելլենք, խօսելով, խնդալով, փոքրիկին հետ զուարճանալով եւ ժամէ մը աւելի քշելէն ետք կը հասնինք Լիբանանեան սահման:

Անսպասելի խճողում մը կը դիմաւորէ մեզ՝ տասնեակներով ինքնաշարժներ՝ անձնական, բեռնատար, օթօպիւս, թաքսի եւ հսկայ բազմութիւն մը խոնուած՝ մաքսատան շէնքէն ներս թէ դուրս: Վրէժը գլուխը կ'առնէ ձեռքերուն մէջ: Այս մէկը հաշուի մէջ չկար: Ինքնաշարժը քիչ մը հեռուն տեղաւորելէ ետք, երկուքս միասին կ'ուղղուինք դէպի գրասենեակի կողմը, փորձելով սպրդիլ մարդոց մէջէն: Կամաց-կամաց յառաջանալով, իբր թէ խիստ ստիպողական հարց մը ունինք, ասոր-անոր կը հրմշտկենք, կեղծ քաղաքավարութեամբ ներողութիւն կը խնդրենք, որ բուն պաշտօնեային մօտենանք եւ կնքել տանք իմ «ելքի արտօնագիր»ս: Անկարելի է: Խոժոռ դէմքեր, դժգոհ նայուածքներ, չեն հաւնիր մեր ճարպիկութիւնը եւ կռահել կու տան ազդարար նշանը անհաճոյ պատահարի մը, եթէ շարունակենք կարգ գողնալու փորձութիւնը կամ անմտութիւնը: Հետզհետէ բազմապատկուող գոռում-գոչումները, վէճերը, հայհոյանքները, սպառնալիքները արտասովոր տեսարան մը կը սարքեն արդէն իսկ քրտինքի, շունչի եւ այլ հոտերու ոլորտներով ապականած այդ մթնոլորտին մէջ: Ո՛չ կարգ կայ, ո՛չ կանոն: Կրնանք երկու ժամ հոն մնալ, այդ լաբիրինթոսին մէջ եւ դեռ չապահովել որեւէ թուղթի կարգադրութիւն: Վրէժին համար, ասիկա աղիտալի կացութիւն մըն է, երբ դեռ



հարիւրաւոր քիլոմէթր ճամբայ ունի կտրելիք Դամասկոսէն՝ Հալէպ, նոյն օրը: Յանկարծ,

-Քեզի բան մը ըսէ՞մ: Քալէ՛ ետ երթանք, կը պայթի Վրէժ:

-Ո՞ւր:

-Օթօ՛, պէտք չկայ թուղթի:

-Բայց Վրէ՛ժ, Խե՞նթ ես, եթէ վերադարձին ինձի կեցնեն:

-Բան մըն ալ չըլլա՛ր, քալէ՛, տինը...

Հայհոյանքով համեմուած Վրէժեան հապճեպ որոշում, որուն համակերպելէ զատ ուրիշ ընտրութիւն չունիմ: Արագ-արագ կ'ուղղուի դէպի Taunus, զիս շուարած ոչխարի մը պէս քաշքշելով իր ետեւէն:

-Վրէ՛ժ, ասոր տակէն բիսութիւն մը չելլէ:

Մտիկ ըրած չունի: Խելքը միտքը՝ ժամ առաջ քշել դէպի Սուրիա, երբ սպասողներ կան՝ Հալէպ եւ մանաւանդ՝ նորածին մը՝ ինքնաշարժին մէջ:

Ինքնաշարժը վարելու պարտականութիւնը ի՛մս է ալ. Ղեկը ձեռք կ'առնեմ եւ երկու երկիրներու սահմանային չեզոք գօտիէն դանդաղօրէն կը յառաջանամ քանի մը հարիւր մէթր անդին գտնուող Սուրիական բաժինը:

-Հոս հարց չենք ունենար, կ'ըսէ Վրէժ: Քոմիսերը կը ճանչնամ եւ վստահ եմ որ շուտով կը կարգադրէ մեր թուղթերը:

Կը մտնենք շէնք եւ կ'ուղղուինք սպայի մը գրասենեակը: Հաստ պէխերով խստադէմ մարդ մը, ծխախոտը բերնին, թասպէհը ձեռքին, ընկողմանած է շարժական իր աթոռին վրայ: «Ահլէն, ահլէն (բարեւ) ըսելով կը դիմաւորէ Վրէժը ու ապա զիս: Քիչ մը սարէն ձորէն, քիֆ-միֆ (ինչպէ՞ս) կեղծ, անկապ խօսակցութիւն մը ծայր կու տայ երկուքին միջեւ, յետոյ պետական պաշտօնեայի յատուկ լուրջ կերպարանք մը առնելով, առանց ուսումնասիրելու, հպանցիկ ակնարկ մը կը նետէ ինքնաշարժի արտօնագրին եւ անցագրերուն վրայ, աչք մըն ալ կը խփէ Վրէժին կողմը, միջին-արեւելեան ընդհանրացած նշան մը՝ իւղոտուելու համար: Կը ստորագրէ, սեղանը փշրելու աստիճան կնիքը ուժգին թա՛-թաք կը գամէ թուղթերուն վրայ, ֆատտա՛լ (հրամմեցէք) մը եւ մա՛սալամի (երթաք խաղաղութեամբ) մը հնչելով կը ճամբէ մեզ: Կը ժպտինք, կը խոնարհինք, աջ ձեռքի ավիը մէյ մը ճակատին, մէյ մըն ալ փորին վրայ հանգչեցնելով կը թոնք դուրս սանդուխներէն վար:

Քիչ մը անդին ապահովութեան ուրիշ պաշտօնեայ մը իր կարգին կը ստուգէ թուղթերը եւ ձեռքի դէպի աջ բնագոյական շարժումով մը նշան կու տայ որ շարունակենք մեր ճամբան: Սահմանագլուխը սկսած է թեթեւալ եւ մութն ալ կոխել: Միտքս փոխելով կ'որոշեմ մինչեւ Դամասկոս ընկերանալ իրենց եւ հոնկէ առնել դէպի Պէրութ վերադարձի թաքսին: Հարիւր մէթր անդին, ճամբուն ծայրը՝ զինուորական խցիկ մը եւս, ձեւակերպական վերջին ստուգումի կայան մըն է



հաւանաբար, երբ հեռուէն կը նշմարենք իւլեզանման արարած մը բանակային տարագով, զենքը ուսին, դուրս կ'ելլէ անկէ, կը կտրէ մեր ճամբան եւ աջ ձեռքը օդին մէջ նշան կ'ընէ որ կենանք: Մարհապա (բարեւ) մը կը փրցնէ ակռաներուն տակէն եւ կը պահանջէ մեր անցագիրը: Տրցակը իրեն կ'երկարենք: Մէկ-մէկ քննելէն ետք, ինքնաշարժին առջեւի պատուհանէն գլուխը կէս մը ներս երկարելով կը դիտէ մեզ, դարձեալ կը նայի թուղթերուն եւ Վրէժին դառնալով կը հարցնէ.

-Հոս հինգ թուղթ կայ, իսկ դուք վեց հոգի էք: Ո՞ւր է վեցերորդ անցագիրը:

-Փոքրիկը նոր ծնած ըլլալուն անցագիրը դեռ չենք հանած, կը բացատրէ մայրը:

-Մա՛ պըսիր (չըլլար): Առանց անցագրի ինչպէ՞ս մինչեւ հոս եկաք: Պզտիկին ծննդեան վկայագիրը ունի՞ք:

-Ունի՛նք, բայց մեր հետ չէ: Պէյրութ ձգեցինք:

Մարդուն աչքերը կը պզտիկնան, յօնքերը կը պոստուին: Ի՞նչ տեսակ բան է ասիկա, սահման անցնիլ առա՛նց թուղթի:

-Հոս նայեցէ՛ք տիկին, պզտիկին ծննդեան վկայագիրը անհրաժե՛շտ է: Առանց անոր անկարելի՛ է: Ես ի՞նչ գիտնամ որ դուք այս պզտիկը չէք փախցնէր...

-Առեւանգե՛լ: Բայց ի՛նչ կ'ըսէք ես սիտնա (պարոն): Ես կրօնաւոր եմ եւ կը վկայեմ որ այս պզտիկը այս տիկնոջ զաւակն է:

-Ձեր խօսքը բաւարար չէ: Փաստը ցոյց տուէ՛ք որ համոզուիմ: Անկարելի՛ է, չեմ արտօներ որ անցնիք:

-Պրն. Ոստիկան- կը պնդէ Վրէժ – այստեղի քոմիսարը մեզի ծանօթ է: Անիկա արդէն արտօնեց:

-Ուալլա՞, (իրա՞ւ) այն աստեն գացէք իրմէ թուղթ մը բերէք, կ'ըսէ զինուորը քիչ մը անակնկալի եկած:

Ա՛լ յստակ է կացութիւնը: Մարդը միտք փոխելիք չէ: Հարցը չկնճռոտած, «թայիպ, թէքրամ» (լա՛ւ, հաճոյքով) ըսելով կը հաւանինք իր պահանջքին եւ կը փորձենլ ետ դառնալ:

-Լա՛հ, լա՛հ (ո՛չ, ո՛չ): Օթօն հոս պէտք է մնայ: Ծայր առէ՛ք, ճամբան բացէ՛ք եւ հիմա դուք երկուքդ գացէ՛ք բերէք:

Վրէժին հետ վազելով ետ կ'երթանք սպային մօտ եւ կը բացատրենք եղելութիւնը:

-Գացէ՛ք, ըսէ՛ք որ հարցէն տեղեակ եմ եւ թող ձգէ որ շարունակէք ճամբորդութիւնը:

-Թուղթ տալու պէտք չկա՛յ- կը հակազդէ սպան քիչ մը ձայնը բարձրացնելով:

Կը վերադառնանք պահակին մօտ: Գլուխը կը սկսի շարժել: Գոհ չէ եղածէն եւ ոչ իսկ կը մտածէ հեռաձայն բանալ իր գլխաւորին:



-Այն աստէն գացէ՛ք, իրեն ըսէք որ ինձի հեռաձայնէ, կ'ըսէ թերահաւատութեամբ:

Շշմած իրարու երես կը նայինք Վրէժն ու ես: Ո՞վ է սա քոստը որ իր մեծաւորին ասպարէզ կը կարդայ: Ասանկ բան կրնա՞յ ըլլալ արաբական երկրի մը մէջ- բացի եթէ հսկիչին հսկիչն է ինք աւելի բարձր իրաւունքներով, քանի որ մին ոստիկան է, այո, սակայն միւսը՝ բանակային:

Մինչ այդ լեռնային ու ցամաքային ցուրտ օդի խառնուրդ մը ակոյայ կճռտելու աստիճան կ'անհանգստացնէ մեզ: Ինքնաշարժին մէջ բոլորն ալ անհանգիստ են, կը մսին ու մանկիկն ալ կը ճչայ շարունակ: Քուն ունի բայց չի կրնար քնանալ: Տեղը նեղացուցիչ է, ձեռքէ ձեռք, գիրկէ գիրկ կը փոխադրուի, կ'օրօրուի, ամէն տեսակ միջոցի կ'ենթարկուի, բայց անօգուտ: Զինուորին գուրջ տեղէն շարժած չունի: Անդրդուելի է իր որոշումին վրայ:

Անդին իրարու ետեւէն ինքնաշարժները կ'անցնին աջէն ձախէն, մարդոց կասկածամիտ նայուածքները գամելով մեր վրայ: Իրենց թուրթերուն ստուգումը կ'ընթանայ նախանձ առթող դիրութեամբ, որմէ յաւիտենապէս զրկուած կը զգանք մենք զմեզ այդ պահուն:

Ճարահատ նորէն կը կտրենք հարիւր մեթրը դէպի ետ, մեր «ծանօթ»ին մօտ եւ բառ առ բառ կը կրկնենք ըսուածները, այն ակնկալութեամբ որ սպան հեռաձայնը ձեռք կ'առնէ, աղուոր լուացողական մը կը տեղայ այդ «ըմբոստ»ին գլխուն, մեր սիրտը պաղեցնելու աստիճան եւ վերջ կը գտնէ մեր չարչարանքը:

Մեծ կ'ըլլայ մեր զարմանքը սակայն, երբ սպան պահիկ մը որոճալէն ետք իր ընելիքին շուրջ, 180 աստիճան դարձ կը կատարէ քիչ առաջուան իր որոշումին վրայ:

-Ձեզի բան մը ըսէ՞մ, կարծեմ իրաւունք ունի զինուորը: Ճիշդ է, որ պզտիկին վկայագիրը պէտք է կրէիք: Կը թելադրեմ որ Պէյրութէն բերել տաք: Կը ցաւիմ, չեմ կրնար հրահանգել որ ճամբան բացուի առանց այդ փաստաթուղթին:

Մտած կը մնանք երկուքս: Լալու աստիճան յուզում մը կը պատէ մեզ: Այսպիսի տաղտուկ նախատեսուած չէր: Կը մտածենք փոքրիկին մասին, անոր լացը եւ տառապանքը կը ճմլեն մեզ: Ալ միակ յոյսը՝ Վրէժին մօրեղբայրն է, փոքրիկին մեծ հայրը, անել այս կացութենէն փրկուելու համար: Պէտք է ծննդեան վկայագիրը կարելի փութով մեզի հասցնէ, ուրիշ ճար չկայ:

Ոստիկանական շէնքին առջեւ, հեռաձայնի խցիկէն Վրէժը կը հեռաձայնէ Պէյրութ: Չար բախտէն, պատասխանող չկայ: Տունը չեն: Ո՞ւր են, չենք գիտեր: Երանի թէ գոյութիւն ունենար բջիջային հեռաձայնը կամ ֆաքսի դրութիւնը: Շուրջ կէս ժամ անդադար կը փորձենք հինգական վայրկեան դադարով, այն յոյսով որ ռեւէ աստէն կրնան վերադարձած ըլլալ: Անօգուտ: Ալ կ'որոշենք որ պէտք է անյապաղ Պէյրութ վերադառնամ, անձամբ զբաղիմ հարցով եւ թուրթը թաքսիով մը դրկեմ իրենց:





Գլխիկոր կ'ուղղուինք դէպի Taunus. Բառերով կարելի չէ բացատրել վիճակը, որ կը տիրէ անոր մէջ: Հիւանդագին է պարզապէս: Կիները կու լան, մանկիկը՝ նոյնպէս. Բացօդեայ բանտի մէջ են կարծես, ամայի ճամբուն ծայրը, մութին մէջ: Դուրս ելլելն ալ խոհեմութիւն չէ շունչ մը առնելու սիրոյն: Կը սպսենք ու կը սպասենք մութին մէջ գայլի աչքերուն պէս ինքնաշարժի երկու լոյս տեսնելու յոյսով, մինչեւ որ բախտը կը ժպտի դէպի Պէյրութ գացող սերվիս թաքսի մը կեցնելու: Երկու ճամբորդ ունի միայն: Կը բացատրենք կացութիւնը շարժավարին:

-«Ըթլահ» (ելի՛ր) կը գոռայ:

Հրածէշտ կ'առնեն բոլորէն եւ կը վստահեցնեն առաքելութիւնս ի կատար ածելու լրիւ: Պէյրութի տան հասցէն ալ կու տանք մարդուն, որպէսզի զիս շիտակ մօրեղօր տունը տանի՝ Անթիլիաս եւ վկայագիրը առնելով վերադառնայ սահման:

Ինքնաշարժը կը նստիմ, սակայն սիրտս կը սկսի տրոփել: Արեան գերճնշումը բան մը չէ, երբ կը մտածեմ ապօրինի ելքիս եւ ճակատագրիս մասին, եթէ յանկարծ զիս կեցնեն: Ո՞վ կրնայ ազատել քեզ սահմանային վատահամբաւ բանտէն: Ո՞վ: Ուղեղս կը չարչրկուի եւ դուրս տալու աստիճան վախ մը կը խրի երակներուս մէջ: Վրէժը որտեղէ՞ն հանեց սահման անցնելու այս գործը: Ինչո՞ւ չսպասեցինք որ թուղթը կնքուի: Ինչո՞ւ նորածինը առանց թուղթի կը ճամբորդէր: Ինչո՞ւ այդ խայտառակ պահակը «մաալէշ» մը (հոգ չէ) չըսաւ ու աչք չգոցեց: Հարցումներ՝ որոնք ա՛լ անիմաստ կը դառնան, երբ շատ ուշ է դարման գտնելու...Շարժավարը սակայն անտեղեակ՝ իմ հոգեկան փոթորկումներուս, ձայնասփիւռը բացած, մէկ կողմէն կը գուգերգէ երգերուն հետ, կը կատակէ, կը խնդայ, եռեւեփող տրամադրութեան մը մէջ: Հայիոյանքի մի քանի փշրանքներ ալ կը սպրդին բերնէն, քաղաքական մարդոց հասցէին, բնականօրէն, մինչ ես, ետեւի աթոռին վրայ կծկուած, ձեռքս դէմքիս, դուրսի սետութիւնը կը նմանցնեմ օրուան մեր բախտին, երբ կամաց-կամաց կը զօրանան Լիբանանի սահմանային լոյսերը: Ինքնաշարժը կը դանդաղի: Յետ միջօրէի խճողումը անհետացած է ա՛լ:

-Դուք գալու պէտք չունիք- կ'ըսէ շարժավարը,- տուէ՛ք ձեր անցագիրը, ես շուտով կը կարգադրեմ: Եւ կը մտնէ շէնք:

Սրտի զարկերս կը բազմապատկուին: Միայն թէ չուշանայ եւ կամ դուրս չգայ ոստիկանի մը հետ...

Մտահոգութիւնս բարեբախտաբար երկար չի տեսեր: Մի քանի վայրկեանէն, արագ քայլերով կ'իջնէ շէնքի սանդուխներէն, թուղթերը մեզի կ'երկարէ եւ ինքնաշարժը կը սկսի սուրալ դէպի Պէյրութ, իսկ ես՝ եօթը ամպերու վրայ: Ի՞նչ ըրաւ չեմ գիտեր, բայց ինծի այնպէս կը թուի, թէ երկու բառով բացատրած ըլլալու է մեր գլխուն եկածը եւ իր պարտականութեան ստիպողական բնոյթը: Այս մարդիկը կրնան ուսում չունենալ, սակայն ի ծնէ կ'որդեգրեն համեստութիւն մը, որ գործ մը յաջողցուցած ըլլալու եսական գոռոգութիւնը կը չեզոքացնէ: Գովեստ որսալու տրամադրութիւն չունի: Բարիք մը ըրա՛ւ, կը մոռնայ: Բարիք մը ստացա՛ւ, չի՛ մոռնար: Ահա այս է ասոնց սկզբունքը, ինչ որ սկսած է նահանջել ընկերային մեր հոլովոյթներուն մէջ,



հետզհետէ եսամոլութեան ու ամբարտաւանութեան անձնատուր եղող մեր երիտասարդութեան մէկ խաւին մէջ:

Շատ չանցած՝ ճամբուն աջ կողմը, Այնճարի լոյսերը սփոփարար երեւոյթ մը կը պարզեն եւ կը հանդարտեցնեն սիրտս:

Կէս գիշերը շատոնց անց, երկու ճամբորդները ձգելէն ետք, թաքսին Անթիլիասի ամայի փողոցներէն զիկ-զակելով կը հասնի Վրէժին մօրեղբօր շէնքին առջեւ: Մեքենան աշխատած կը մնայ, մինչ ես վերելակով կը մագլցիմ 7րդ յարկ: Դուռը զարնելու պէտք չըլլար, քանի որ մօրեղբայրը եւ տիկինը դուռը բաց, թաց աչքերով զիս կը դիմաւորեն, ապահովաբար նկատած ըլլալով ինքնաշարժին ժամանումը վերի պատշգամէն:

-Ղրկեցի՛նք, ղրկեցի՛նք-կ'ըսեն երկուքը մէկ:

-Բայց ե՞րբ ղրկեցիք, ո՞ր կէ գիտցաք:

-Քիչ առաջ, Վրէժին հեռաձայնը ստացանք: Պատմեց եղածները: Թաքսի մը կանչեցինք եւ վկայագիրը գնաց: Միտքդ հանգիստ թող ըլլայ: Շատ կը ցաւինք պատահարին համար: Միսլ մըն էր որ եղաւ: Մեղք որ պզտիկը շատ չարչարուեցաւ, քեզի ալ յոգնեցուցինք: Ա՛լ տուն կրնաս երթալ եւ հանգստանալ: Շնորհակալ ենք բարիքիդ համար:

Կը թերեւնամ քիչ մը, կ'ուրախանամ, ժամանակ խնայած ըլլալով, կը ձեռնուիմ ու կը բաժնուիմ:

Թաքսին զիս կը տանի տուն: Խոշոր «շուքրան»ով (շնորհակալութեամբ) եւ յաւելեալ վճարումով մը կը ճամբեմ զինք, քանի որ ա՛լ կարիքը չկայ իր սերվիսին: Կը մտնեմ տուն:

Տունը լոյսերու մէջ է այդ ուշ ժամուն: Հայրս, մայրս, մեծմայրս բոլորը արթուն են, սրտերնին թունդ ելած:

-Ո՞ր մնացիր տղաս: Ինչո՞ւ այսքան ուշացար: Վախցանք որ «աքսիտան» եղաք,- կ'ըսէ մայրս փաթթուելով:

-Մամա՛, աքսիտան-մաքսիտան չեղանք: Ձգէ՛ վաղը պատմեմ եղածը: Երկար է: Շատ յոգնած եմ:

-Ուր է նէ անօթի ես, պատառ մը բան մը դնեմ, կէ՛ր:

-Մամա՛, բան կերած չեմ, այո՛, բայց հաւատա՛ որ ախորժակ չունիմ: Գլուխս պայթելու աստիճան կը ցաւի: Ասքո մը պիտի առնեմ եւ մէկ կտոր՝ անկողին:

-Ինչպէս որ կ'ուզես տղաս:

Վստահ եմ որ ուղեղ կը կրծեն գիտնալու համար ուշացումիս պատճառը: Դէմքս եւ մարմինս շատ բան կ'ըսեն բայց բաւարար չեն գոհացնելու անախորժ պատահարի մանրամասնութեան թափանցելու իրենց մարմաջը:



Կիսամերկ կը փլիւմ անկողնիս վրայ: Պէյրութի ամառնային խոնաւ ու հեղձուցիչ տաքը եւ Նահիր գետի անուանի մժեղները առաջին անգամ ըլլալով չեն խանգարեր զիս, քանի որ մորֆին մը համտեսածի պէս թմրած ու թաղուած եմ ենթագիտակցութեանս փոսին մէջ:

Ի՛նչ անոյշ է քունը, մտքի ու մարմնի սպառիչ յոգնութենէ մը ետք: Կա՛ս ու չկա՛ս: Կը շոգիանան ամէն տեսակ մտածում, պրկում, stress ու քեզ կը վերադարձնեն օրօրոցային անմեղութեան, լռութեան, խաղաղութեան... պահապան հրեշտակի հսկողութեան տակ...ինչ փոյթ թէ՛ թաք, թաք...ներ մը կը լսուին երբեմն...

-Վարդա՛ն, Վարդա՛ն, տղա՛ս, Վարդա՛ն, արթնցի՛ր: Քեզի եմ, ես եմ ձագուկս, մամադ է, արթնցիր...

Գէշ երա՛զ մը կը տեսնեմ արդեօք: Սահմանային բանտի ոստիկա՞նն է, որ զիս կը հրմշտկէ- կը ցնցէ...

-Արթնցի՛ր տղաս, նայէ ո՛վ եկեր է:

Ցնցումը կը սաստկանայ մարմնիս վրայ, հետզհետէ բարձրացող մօրս կանչին հետ ու կը ստիպէ զիս որ աչքերս կէս մը բանամ, դեռ նայուածքս բարձին վրայ: Կը վախնամ որ սենեակին լամբը աչքս մթագնէ, եթէ դառնամ մօրս կողմը:

-Ի՛նչ կ'ուզես մամա, ի՛նչ կայ...

-Նայէ՛ ո'վ հոս է:

Հիբնոթիզմէն արթնցողի պէս կամացուկ մը կը դառնամ կոնակիս վրայ, աչքերս կը շփեմ եւ մօրս կիսամութ դէմքին ետին պղտոր, ծանօթ դէմք մը կ'ուրուագծուի խաւարումի մէջ եղող լուսնին պէս:

Ընդոստ կը ցատկեմ վեր:

Վրէ՛ժն է...

Կը կարծեմ որ դեռ երազի մէջ եմ: Աչքերս քիչ մը եւս կը շփեմ հաստատելու համար տեսարանին իրականութիւնը եւ, Աստուա՛ծ իմ, սխալած չեմ, սուտ չէ, խաբկանք չէ՛, միրաժ չէ՛... Վրէ՛ժն է: Կը սարսռամ:

-Բայց, Վրէ՛ժ, քեռիդ ըսաւ որ թուղթերը դրկած է, չստացա՞ք:

-Ստացա՛նք, ստացա՛նք, թաքսին բերաւ, բայց...

-Բայց ի՛նչ

-Օ՛, Taunus-ին բանալին ո՞ր է

-Բանալի՞ն...

Ամմա՛ն: Թուքս կլլելով կը ցատկեմ վեր, բնագոյաբար ձեռքս կ'երկարեմ բաճկոնիս ձախ գրպանը եւ ահա՛ կարծրութիւն մը, շխրտոց մը կը ցնցէ մարմինս մազէս մինչեւ



ոտքս:

Մինչ մարելու աստիճան յուզումը կը պատէ էութիւնս, անհաւատալի այս մտացրութեանս համար, Վրէժ, իրեն յատուկ քննիծաղով, կը վայելէ իմ տակնուվրայութիւնս ու կը փորձէ մխիթարել զիս, ցաւս մեղմելու ձախող փորձով մը:

-Հոգ չէ, հոգ չէ, կը պատահի, հայտէ՛, գնա՛ քնացիր:

-Ո՞ւր կ'երթաս կոր, կեցի՛ր, սուրճ մը խմէ...

-Սո՞ւրճ, իսկնթեցա՞ր, չէ՞ ս լսեր կոր թաքսիին ձայնը, վա՛րը:

Առտուան ժամը 4-ն է: Պուրճ Համուտի փողոցներէն իսկազարուած ինքնաշարժի մը կատաղի ձայնը թաղերը սարսող զօրութեամբ երկար ատեն յամեցած կը մնայ գիշերուան մութին մէջ, մինչ մտածումս ինքնաշարժէն առաջ կը հասնի չորս այդ դժբախտներուն՝ սահմանին վրայ, մանաւանդ՝ չորրորդին...նորածինին վրայ:

Մինչեւ հիմա դեռ կ'ափսոսամ: Ո՛չ մոռցած եմ եւ ո՛չ ալ ներած ինքզինքիս, որ «տուգ պիպեր» ցանեցի եղածներուն վրայ...դէպքէն ճիշդ 50 տարիներ ետք:

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆ